(ՌՃԺԱ = 1662)

. . . (*) Եւ հինգ աւուրբ յառաջ Կիրակի գիշերի եղև կրակ սաստիկ բոցով, որ երբեմն ի մեծ այրոցին այրեալ էր և չէնն միայն այն էր ի սահմանս Տաւութ փաշայի և նա ևս այրեցաւ Բ տամբ և Զ խանութիւ և հացածախի փռամբ։ Իսկ ի Դ–ն Փետրվարի մարդ առաքեալ աստ հրամանաւ արքայի սպանեն զոմն Պէշիր աղայ անուանեալ, որ Ղե տարոյ։

Ի սոյն աւուրս եկն Թաթարն ի Մօսկօֆայ, որ գնացեալ էր ՂՌ ա[բամբ] և նստէր յերկիրն և բազում աւերս առնէր և շատ պատերազմ։ Իսկ ի Մօսկօֆայ յաւել քան զԿՌ մարդ մեռան և գերեցան, քանզի Թ ամիս մնացին յերկիրն, և ով հաց բերէր նոցա՝ հորէին յ... և թաղէին և որք յորոնումն գային՝ զայնս ապա առնէին . . . ։ Եւ լինէր սով ի մէջ բանակի նոցա և ձանձրանային զօրք, որոց գլուխն որպէս օրէն է յղէր ի կողմանս կողմանս գունդ գունդ։ Ուր որ երթային՝ աւար առնէին, կոտորէին և աւերէին, վասն որոյ հասեալ ի վերայ նոցա պատիժ, զի յառնելն ի պատերազմ ի վերայ Տանաւիս գետոյ, զոր տեսեալ սառեալ և լինէին ի կուիւ և որք կային ի վերայ՝ մխեցան ի սառն և որ յառաջ և զկնի փախչէին (ԳՈՂԸ ԿՈՐՈՒԾ)

Եւ ի ԻԴ Փետրուարի μαγαππαν (այսպէս) եղև, և ի Մարտի յինն օծաւ Սուրբ Նիկողայոսու եկեղեցին՝ Դատաւորի Կիրակին, կնքեցաւ եւ այգուցն ملكيا (**) (Մաղաքիա) առաջնածին գոլով յաւազանէն։

(*) Թուղթեր ինկած։

(**) Լուս. ملكيا